ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

28 մարտի 2025թ. **N 33-Ն**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ, ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 43-րդ հոդվածի 8.1, 8.2-րդ և 8.3-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Սահմանել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների ատեստավորման ժամանակացույցը, ատեստավորման հանձնաժողովի կազմը, աշխատակարգը և ձևավորման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սահմանել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների ատեստավորում անցկացնելու կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների առաջին ատեստավորումն անցկացնել սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների առաջին ատեստավորման կազմակերպման և անցկացման հարաբերությունների վրա տարածել սույն որոշմամբ սահմանված կարգերի կիրառելի նորմերը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի ապրիլի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2025թ. մարտի 28-ի N 33-Ն որոշման

ԿԱՐԳ
ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ, ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Սույն կարգով սահմանվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների (այսուհետ՝ Հանձնաժողովներ) անդամների ատեստավորման ժամանակացույցը, ատեստավորման հանձնաժողովի կազմը, աշխատակարգը և ձևավորման կարգը:

2. Ատեստավորումը՝ Հանձնաժողովների անդամների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների ստուգումն է:

3. Հանձնաժողովների անդամները ենթակա են ամենամյա պարտադիր ատեստավորման:

4. Հանձնաժողովների անդամների ատեստավորման անցկացման ժամանակացույցը սահմանվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի իրավական ակտով:

5. Ատեստավորման ենթակա Հանձնաժողովների անդամները ոչ ուշ, քան ատեստավորումից մեկ ամիս առաջ տեղեկացվում են ատեստավորման անցկացման մասին՝ լրացնելով Հանձնաժողովների անդամների ատեստավորում անցնելու ծանուցման թերթը՝ համաձայն N 1 հավելվածի Ձև N 1-ի:

Ատեստավորում անցնելու ծանուցման թերթը Հանձնաժողովի ատեստավորվող անդամին հանձնելու անհնարինության դեպքում, վերջինիս ծանուցելու համար օգտագործվում են ծանուցման հնարավոր այլ եղանակները (փոստային առաքման, համացանցային կայքում տեղեկություն տեղադրելու, հեռախոսահամարի, էլեկտրոնային փոստային հասցեի, ըստ հնարավորության՝ նաև կարճ հաղորդագրություն ուղարկելու միջոցով և այլն): Ծանուցման նշված եղանակների կիրառումը համարվում է պատշաճ ծանուցում:

6. Հանձնաժողովների անդամների ատեստավորումը կազմակերպվում է Երևան քաղաքում և մարզերում:

7. Ատեստավորման ենթակա չեն տվյալ պաշտոնը երկու ամսից պակաս ժամկետով զբաղեցնող Հանձնաժողովների անդամները, եթե նրանք ավելի շուտ ատեստավորվելու ցանկություն չեն հայտնել: Հանձնաժողովում նոր անդամ նշանակվելու դեպքում, վերջինիս ատեստավորումն անցկացվում է ատեստավորման ժամանակացույցով նախատեսված առավել մոտ ժամանակում:

8. Ընթացիկ տարում ատեստավորման ենթակա Հանձնաժողովների անդամների կազմում փոփոխություններ տեղի ունենալու դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գլխավոր քարտուղարի կողմից տասն աշխատանքային օրվա ընթացքում այդ տեղեկատվությունը ներկայացվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին:

9. Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակ Հանձնաժողովի անդամը ենթակա է ատեստավորման աշխատանքի ներկայանալուց հետո՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ժամանակացույցին համապատասխան, բայց ոչ ուշ, քան եռամսյա ժամկետում:

10. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ կարող է անցկացվել արտահերթ ատեստավորում:

11. Հանձնաժողովների անդամների ատեստավորման անցկացման նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ձևավորում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի առնվազն հինգ անդամից կազմված ատեստավորման հանձնաժողով և նշանակում ատեստավորման հանձնաժողովի քարտուղար, ով ատեստավորման հանձնաժողովի անդամ չի հանդիսանում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի իրավական ակտով կարող է հաստատվել ատեստավորման հանձնաժողովի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով ներկա գտնվելու իրավասություն ունեցող անձանց ցանկը:

12. Յուրաքանչյուր ատեստավորումից առաջ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հաստատում է ատեստավորման հանձնաժողովի կազմը:

Ատեստավորման հանձնաժողովը կարող է ընդունել իր գործունեությանն առնչվող աշխատակարգային որոշումներ, որոնք չեն կարող հակասել սույն որոշմանը:

13. Ատեստավորման հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են ատեստավորման հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Ատեստավորման հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ ատեստավորման հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայներով: Ատեստավորման հանձնաժողովի անդամը որոշում ընդունելիս քվեարկում է միայն կողմ կամ դեմ:

14. Ատեստավորմանը մասնակցած Հանձնաժողովների անդամներն ատեստավորման արդյունքների մասին տեղեկացվում են ատեստավորման արդյունքներով ընդունված որոշումն ընդունելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Ձև N 1

ԾԱՆՈՒՑՄԱՆ ԹԵՐԹ
ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԱՆԴԱՄԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑՆԵԼՈՒ

Ես՝_____
ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի անուն, ազգանուն

_____
պաշտոն

տեղեկացված եմ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) սահմանված կարգով

20 ____ թվականի _____ _____-ին ____ ժամին _____ վայրում

_____
ատեստավորում անցկացնելու տարի, ամիս, ամսաթիվ, ժամ, վայր

ամենամյա պարտադիր/արտահերթ/կրկնակի ատեստավորում անցնելու մասին:

Տեղեկացված եմ նաև, որ

1) Ընտրական օրենսգրքի 43-րդ հոդվածի 8.3-րդ մասով սահմանված կրկնակի ատեստավորման արդյունքներով ատեստավորման հանձնաժողովի կողմից զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին որոշում ընդունելն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հիմք է:
2) Ընտրական օրենսգրքի 43-րդ հոդվածով և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025 թվականի մարտի 28-ի N 33-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում ատեստավորմանը չներկայանալը կամ մասնակցելուց հրաժարվելն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հիմք է:

_____ /_____/ 20 թ._____

ԸԸՀ անդամի ստորագրություն | անուն, ազգանուն | տարեթիվ, ամիս, օր

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2025թ. մարտի 28-ի N -Ն որոշման

ԿԱՐԳ
ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Սույն կարգով սահմանվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների (այսուհետ՝ Հանձնաժողովներ) անդամների ատեստավորում անցկացնելու կարգը:

2. Հանձնաժողովների անդամների ատեստավորումն անցկացվում է ստուգարքի և հարցազրույցի միջոցով՝ ատեստավորման հանձնաժողովի կողմից:

3. Ստուգարքի և հարցազրույցի հարցերը կազմում է ատեստավորման հանձնաժողովը:

4. Ստուգարքն անցկացվում է հայերեն լեզվով՝ թեստավորման միջոցով՝ համակարգչային կամ թղթային եղանակով: 5. Հանձնաժողովների անդամների ատեստավորումն անցկացվում է Հանձնաժողովի անդամի անմիջական մասնակցությամբ:

6. Ատեստավորման ենթակա Հանձնաժողովի անդամը թեստավորմանը մասնակցելու համար ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ: Ատեստավորման հանձնաժողովի քարտուղարը ստուգում է Հանձնաժողովի անդամի ինքնությունը և թույլատրում մասնակցել թեստավորմանը:

7. Ատեստավորմանն արգելվում է իրենց հետ սենյակ բերել կապի միջոցներ կամ այլ տեխնիկական սարքեր:

8. Ատեստավորման հանձնաժողովի քարտուղարը բացատրում է թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը, պատասխանում է բոլոր հարցերին, որպեսզի հավաստիանա, որ հասկանալի է թեստային առաջադրանքի էությունը:

9. Թեստավորման առաջադրանքները կազմվում են հարցերից՝ ենթադրյալ պատասխաններով, ինչպես նաև խնդիրներից:

10. Մինչև թեստավորման փուլի սկիզբն ատեստավորման հանձնաժողովը ձևավորում է Հանձնաժողովների անդամների թեստավորումն անցկացնելու համար համապատասխան հարցերը, խնդիրները և կազմում է թեստային առաջադրանքը:

11. Թեստային առաջադրանքների հարցերը, խնդիրներն ընդգրկում են հետևյալ բնագավառները՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Ընտրական օրենսգիրք, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներ:

12. Թեստավորման առաջադրանքները կատարելու համար Հանձնաժողովների անդամներին տրամադրվում է 60 րոպե ժամանակ:

13. Թեստավորման ընթացքում Հանձնաժողովի անդամին չի թույլատրվում՝ դուրս գալ սենյակից, աղմկել, հուշել, խոսել, օգտվել որևէ գրավոր (տպագիր, մեքենագիր, ձեռագիր և այլն) նյութից, կապի միջոցներից կամ այլ տեխնիկական սարքերից, ինչպես նաև թեստավորման առաջադրանքների կատարման համար աղբյուր հանդիսացող այլ

միջոցներից (բացառությամբ՝ ատեստավորման հանձնաժողովի կողմից տրամադրվող միջոցների), թեստավորման առաջադրանքների կատարման հետ կապված հարցեր տալ ներկա գտնվող անձանց, բացառությամբ՝ տեխնիկական բնույթի հարցերի:

14. Սույն կարգի 13-րդ կետի պահանջների խախտման դեպքում տվյալ Հանձնաժողովի անդամի մասնակցությունն ատեստավորմանը դադարեցվում է, աշխատանքը ճանաչվում է անվավեր և գնահատվում է զրո միավոր, ինչի մասին ատեստավորման հանձնաժողովի քարտուղարը նշում է կատարում ատեստավորման թերթում կամ համակարգչում:

15. Թեստային առաջադրանքի կատարումն ավարտելուց, ինչպես նաև թեստավորման առաջադրանքների կատարման համար հատկացված ժամանակն սպառվելուց հետո՝ Հանձնաժողովի անդամը թեստային առաջադրանքը հանձնում է ատեստավորման հանձնաժողովի քարտուղարին, իսկ համակարգչային եղանակով թեստավորման դեպքում՝ համապատասխան հրահանգի միջոցով ավարտում է թեստային առաջադրանքը, և դուրս գալիս սենյակից:

16. Թեստային առաջադրանքը բաղկացած է 30 առաջադրանքից: Հարցերը գնահատվում են մինչև 2 միավոր, խնդիրները՝ 5 միավոր: Ստուգարքի փուլը համարվում է հաղթահարված, եթե Հանձնաժողովի անդամը հավաքել է միավորների ընդհանուր թվի առնվազն 80 տոկոսը:

17. Ատեստավորման մասնակիցը, ատեստավորման ավարտից հետո, ցանկության դեպքում կարող է գրավոր դիմել ատեստավորման հանձնաժողովին և ստանալ իր թեստային առաջադրանքի պատճենը:

18. Ստուգարքի փուլը հաղթահարած Հանձնաժողովի անդամները տեղեկացվում են հարցազրույցի անցկացման վայրի, օրվա և ժամի մասին:

19. Հարցազրույցի փուլում գնահատվում է Հանձնաժողովի ատեստավորվող անդամների բարեվարքության, վարվեցողության, տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու, հաղորդակցվելու, տեղեկատվությունն արագ ու ճիշտ վերլուծելու, հարցերին արագ և պատշաճ պատասխանելու, թիմային աշխատանք կատարելու, պատասխանատու գործելու և այլ հմտությունները, ունակություններն ու կարողությունները:

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄՆ ՈՒ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

20. Հարցազրույցի ավարտից հետո ատեստավորման հանձնաժողովն ամփոփում է արդյունքները և յուրաքանչյուր մասնակցի համար կազմում է ատեստավորման թերթ՝ համաձայն N 2 հավելվածի Ձև N 1-ի, որը ստորագրվում է ատեստավորման հանձնաժողովի նախագահի և անդամների կողմից:

21. Ատեստավորման հանձնաժողովը Հանձնաժողովի անդամների ատեստավորման արդյունքներով ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

1) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին,

2) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:

22. Ատեստավորման հանձնաժողովի քվեարկության արդյունքով ընդունված է համարվում այն որոշումը, որն ստացել է ատեստավորման հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայները:

23. Սույն կարգի 21-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված որոշումները կարող են ընդունվել ատեստավորման հանձնաժողովի անդամների առնվազն 2/3-ի մասնակցությամբ:

24. Ատեստավորմանը մասնակցած Հանձնաժողովի այն անդամները, որոնց վերաբերյալ կայացվել է «չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին» որոշումը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ժամանակացույցին համապատասխան, բայց ոչ ուշ, քան որոշումն ընդունվելուց հետո՝ եռամսյա ժամկետում, կրկին անցնում են ատեստավորում:

25. Կրկնակի ատեստավորման արդյունքներով ատեստավորման հանձնաժողովի զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին որոշումն ընդունվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, Հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից:

26. Ատեստավորման արդյունքների վերաբերյալ տեղեկացվելուց հետո այդ արդյունքները կարող են մասնակցի կողմից բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

27. Ատեստավորման արդյունքները վարչական կարգով կարող են բողոքարկվել ատեստավորման արդյունքների մասին տեղեկացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

28. Ատեստավորման հանձնաժողովի աշխատանքների ավարտից անմիջապես հետո ատեստավորմանն առնչվող փաստաթղթերը և ատեստավորման հանձնաժողովի որոշումները կցվում են Հանձնաժողովի անդամի անձնական գործին:

29. Հանձնաժողովի անդամի կողմից հարցազրույցին մասնակցելուց հրաժարվելու կամ չներկայանալու մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է Հանձնաժողովի անդամի անձնական գործին:

Ընտրական օրենսգրքի և սույն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգի 4-րդ, 9-րդ և 10-րդ կետերով, ինչպես նաև սույն որոշման N 2 հավելվածով սահմանված կարգի 24-րդ կետով սահմանված ժամկետներում ատեստավորմանը չներկայանալը կամ մասնակցելուց հրաժարվելը Հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հիմք է:

30. Սույն կարգով ատեստավորման նախապատրաստական աշխատանքներն իրականացնելու համար նախատեսված դրույթների կատարման անմիջական պատասխանատուն Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովն է:

Ձև N 2

Ա Տ Ե Ս Տ Ա Վ Ո Ր Մ Ա Ն Թ Ե Ր Թ

(ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի)

Ատեստավորման եղանակը՝

☐ ստուգարք,

☐ հարցազրույց:

1. Ազգանուն, անուն, հայրանուն _____

2. Ծննդյան տարի, ամիս, ամսաթիվ _____

3. Ատեստավորման պահին զբաղեցրած պաշտոնի անվանում և այդ պաշտոնին նշանակվելու տարի, ամիս, ամսաթիվ _____
_____
_____

4. Թեստավորման արդյունքը (միավորներով և տոկոսով)՝ _____

5. Քվեարկությանը մասնակցել են ատեստավորման հանձնաժողովի _____ անդամներ, որից կողմ են քվեարկել _____ անդամ,

6. Ատեստավորման արդյունքում ատեստավորման հանձնաժողովի ընդունած որոշումը.
_____
_____

Հանձնաժողովի նախագահ՝	_____ անուն, ազգանուն	(_____) ստորագրություն
Հանձնաժողովի անդամներ՝	_____ անուն, ազգանուն	(_____) ստորագրություն
	_____	(_____)
	_____	(_____)
	_____	(_____)
	_____	(_____)
	_____	(_____)
	_____	(_____)

Կ.Տ.

Ատեստավորման անցկացման ամսաթիվ՝ ____ _____ 20___ թ.

Ատեստավորման թերթի հետ ծանոթացա՝ _____ (_____)
ԸԸՀ անդամի ստորագրություն անուն, ազգանուն

__ _____ 20___ թ.